

Ը .

Ով ձուկ ու գինի ունի ու խումար մարդուն խընայէ,
Թող մուկն իւր կարասն ընկնի, կատուն իր ձըկնակն աւիրէ:

Թ .

Կացին ի մորին ընկեր, ծառերուն տակըն կու խուզէ.
Ծառերն այլ ի խօսք ելան՝ «Ի՞նչ անեմք որ կորն ի մենէ»:

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա .

Կ'ուզե՞ս որ ազիզ կենաս, որ ամէն մարդ ըզքեզ սիրէ,
Դուն հողու նըման կեցիր, որ ամէն մարդ ըզքեզ կոխէ:
Քան գերկաթն այլ ի՞նչ ամուր, որ կըրա՛կըն զինք կու հալէ:
Դու ջըրի նըման կեցիր որ կըրակն ի քենէ վախէ:

Բ .

Դաւիթ մարգարէն կ'ասէ՝ Ապրեցո՛յ ի մարդոյ չարէ,
Մարդոյ չարըն հանց վատ է որ զգագանքն ի լեռն ածել է.
Չառիձն ի զընճիլ դըրած՝ չոպանին կուտան թէ՛ Քաշէ՛.
Շատ է չոպանին զահլան, առիձին առջեւ կու քաշէ:

Գ .

Մարդն որ սիրելի անես, նա զասլըն մարդուն դու քըննէ՛.
Յատ ան մարդուն մի՛ նըստիր, երբ ըզքեզ զըրուցէ,
Ըզնետըն մահու ձըգէ ու զաղե՛ղըն դառնայ պահէ,
Չարիւնըդ զէտ ջուր վաթէ, դառնայ մէկ խօսք վըճարէ:

Դ .

Յիմ շատ կուսահին ահէն զիս երերն ու լացն է առեր.
Ոչ ով չէ պատճառ եղեր, չեմ այլոց ձեռք ես խաբուեր.
Իմ սըրտիս յօժար կամօքն ի ամէն մեղքն եմ հանդիպեր,
Միոյ հակառակ կացեր, զօրինաց ցանկն եմ պատառեր:

Ե .

Աշխարհս է ի ծով նըման ու մարդիք ի ներս կու լողան:
Մարմինքն են նաւի նըման, հոգին գա՛նձ է անապական.
Մարդիք զինչ գարնան ծաղիկ փըթըթին՝ Լ այլվի չորանան.